

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔ

«ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-150-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին պարբերությունից հանել «լիցենզավորումը» բառը:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածում՝

1) ««Անվճարունակության (սնանկության) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի» բառերը փոխարինել ««Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների, վճարահաշվարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերով:

2) 3-րդ մասը «սույն օրենքով» բառերից հետո լրացնել «, «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերով:

Հոդված 3. Օրենքի 3-րդ հոդվածում «Ժգ» կետից երկրորդ նախադասությունը հանել:

Հոդված 4. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետում «համապատասխանի Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված որակավորման պահանջներին» բառերը փոխարինել ««Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն համապատասխան պաշտոնի համար մասնագիտական գիտելիքների թեստավորում անցած և այդ թեստավորման արդյունքներով բավարար միավորներ հավաքած լինելը հավաստող վավեր վկայական ունեցող տվյալ պաշտոնի համար հավուր պատշաճին համապատասխանող անձ լինի» բառերով:

Հոդված 5. Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասում ««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին»» բառերը փոխարինել ««Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին»» բառերով:

Հոդված 6. Օրենքի 19-րդ հոդվածում՝

1) 1-ին և 2-րդ մասերը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝
«1. Վճարահաշվարկային կազմակերպությունը «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և դրա հիման վրա ընդունված Կենտրոնական

բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով վճարահաշվարկային կազմակերպության գործունեության լիցենզիա ստացած իրավաբանական անձն է:

2. Վճարահաշվարկային կազմակերպությունների տեսակներն են՝

ա) դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունները, որոնք մատուցում են սույն օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով նախատեսված վճարահաշվարկային ծառայություններ, ինչպես նաև վերջիններիս հետ կապված և լիցենզիայի ներդիրում նշված այլ վճարահաշվարկային ծառայություններ.

բ) վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունները, որոնք իրականացնում են պրոցեսինգ և (կամ) քլիրինգ երրորդ անձանց համար, ինչպես նաև այդ ծառայությունների հետ կապված և լիցենզիայի ներդիրում նշված այլ վճարահաշվարկային ծառայություններ.

գ) դրամական (փողային) փոխանցումներ և վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունները, որոնք մատուցում են սույն օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով նախատեսված վճարահաշվարկային ծառայություններ և իրականացնում են պրոցեսինգ և (կամ) քլիրինգ երրորդ անձանց համար, ինչպես նաև մատուցում են այդ ծառայությունների հետ կապված և լիցենզիայի ներդիրում նշված այլ վճարահաշվարկային ծառայություններ:».

2) 5-րդ մասը ««ա»» և ««բ»» տառերից հետո լրացնել «կամ «գ» բառերով».

3) 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«6. Արգելվում է Կենտրոնական բանկի կողմից որպես վճարահաշվարկային կազմակերպություն կամ դրա մասնաճյուղ (ներկայացուցչություն) չգրանցված անձանց կողմից «վճարահաշվարկային կազմակերպություն» բառակապակցության, դրա հոլովված ձևերի, օտար լեզվով այդ բառերի հայերեն տառադարձությունների, թարգմանությունների կամ դրանց գուգորությունների օգտագործումն իրենց անվան մեջ, գովազդներում, հրապարակային օֆերտայում կամ որևէ կերպ աջակցելը գովազդելուն, եթե դրանց օգտագործման իմաստից չի բխում որ խոսքը չի վերաբերում սույն օրենքով սահմանված վճարահաշվարկային կազմակերպության գործունեությանը, և եթե նման օգտագործման իրավունքը չի վերապահվել օրենքով կամ միջազգային պայմանագրով:».

4) 8-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 7. Օրենքի 20-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 20. Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորումը

1. Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորման կարգը և պայմանները սահմանվում են բացառապես «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և դրա հիման վրա ընդունված Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով: Այլ օրենքներով լիցենզավորման վերաբերյալ այլ դրույթներ սահմանված լինելու դեպքում վճարահաշվարկային կազմակերպությունների համար գործում են «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները:»:

Հոդված 8. Օրենքի 21-րդ և 22-րդ հոդվածներն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 9. Օրենքի 24-րդ հոդվածում ««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին»» բառերը փոխարինել ««Ֆինանսական

կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին»» բառերով:

Հոդված 10. Օրենքի 27-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «գ» կետում «տրակավորման վկայականից զրկում» բառերը փոխարինել «կամ պատասխանատու աշխատակցին տրված չառարկելու մասին նամակի հետ կանչում» բառերով.

2) 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«4. Վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարին կամ պատասխանատու աշխատակցին տրված չառարկելու մասին նամակը, որպես պատասխանատվության միջոց, կարող է հետ կանչվել Կենտրոնական բանկի որոշմամբ, եթե նա՝

1) դիտավորությամբ խախտել է օրենքը կամ այլ իրավական ակտը.

2) կատարել է այնպիսի գործողություններ կամ ցուցաբերել է այնպիսի անգործություն, որի հետևանքով վճարահաշվարկային կազմակերպությունը կրել է կամ կարող էր կրել զգալի ֆինանսական կամ այլ վնասներ.

3) պաշտոնավարման ընթացքում վարել է անհիմն և վճարահաշվարկային կազմակերպության հաճախորդների օրինական շահերը վտանգող գործունեություն կամ դրսևորել է անազնիվ կամ անբարեխիղճ վերաբերմունք իր ծառայողական պարտականությունների, այդ թվում՝ վճարահաշվարկային կազմակերպության կամ նրա հաճախորդների հանդեպ ստանձնած պարտականությունների նկատմամբ.

4) խոչընդոտել է վերահսկողություն իրականացնելու կապակցությամբ Կենտրոնական բանկի, նրա ծառայողների գործողություններին կամ չի կատարել կամ ոչ պատշաճ է կատարել Կենտրոնական բանկի՝ օրենքի հիման վրա տրված հանձնարարականները.

5) գործունեության ընթացքում կատարել է անձնական շահերից բխող այնպիսի գործողություն կամ թույլ է տվել այնպիսի անգործունեություն, որը հակասում է վճարահաշվարկային կազմակերպության կամ նրա հաճախորդների օրինական շահերին:».

3) 5-րդ մասի երկրորդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել.

4) 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«6. Վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիան ամբողջությամբ կամ առանձին վճարահաշվարկային ծառայության (ծառայությունների) մասով կարող է, որպես պատասխանատվության միջոց, ուժը կորցրած ճանաչվել Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ, եթե՝

1) վճարահաշվարկային կազմակերպությունը լիցենզիա (լրացուցիչ թույլտվություն) ստանալուց հետո 12 ամիս անընդմեջ վճարահաշվարկային գործունեություն չի իրականացրել (չի մատուցել համապատասխան վճարահաշվարկային ծառայությունը).

2) վճարահաշվարկային կազմակերպությունը հրապարակել կամ Կենտրոնական բանկ է ներկայացրել (այդ թվում՝ լիցենզավորման գործընթացում) ապակողմնորոշիչ, ոչ արժանահավատ տեղեկատվություն կամ կեղծ փաստաթղթեր.

3) վճարահաշվարկային կազմակերպությունը կամ նրա ղեկավարները թույլ են տվել սույն օրենքի, վճարահաշվարկային կազմակերպության գործունեությունը կարգավորող այլ օրենքների, դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի կամ իր ներքին իրավական ակտերի պահանջների պարբերական (երկու և ավելի) խախտումներ.

4) վճարահաշվարկային կազմակերպությունն իրականացրել է սույն օրենքի համաձայն իրեն չթույլատրված գործունեություն.

5) վճարահաշվարկային կազմակերպությունը թույլ է տվել այնպիսի արարք (գործողություն կամ անգործություն), որը Կենտրոնական բանկի հիմնավորված կարծիքով վտանգել է նրա հաճախորդների օրինական շահերը կամ վճարահաշվարկային համակարգի բնականոն և իրավաչափ գործունեությունը կամ հանգեցրել է հրապարակման կամ

տրամադրման ոչ ենթակա տեղեկատվության արտահոսքի.

6) վճարահաշվարկային կազմակերպությունը չի իրականացրել կամ ոչ պատշաճ է իրականացրել Կենտրոնական բանկի կողմից օրենքի համաձայն տրված հանձնարարականները.

7) խախտվել են օրենքով և դրա հիման վրա Կենտրոնական բանկի ընդունած նորմատիվ իրավական ակտերով սահմանված տնտեսական նորմատիվները՝ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված չափով.

8) խախտվել են հաշվապահական հաշվառում վարելու կանոնները կամ ֆինանսական կամ այլ հաշվետվությունների ներկայացման կամ հրապարակման կարգը կամ պայմանները:».

5) 11-րդ մասի առաջին պարբերությունն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 11. Օրենքի 28-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 12. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից վեց ամիս հետո: